

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 15/1

1 հուլիսի 2016թ.

Քննարկվեց «ՄԳՏՍՄ սերվիս» ՓԲԸ 18.05.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 24.03.2016թ-ի թիվ 5012041 ակտի դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 17.06.2015թ-ի թիվ 5012041 հանձնարարագրի համաձայն «ՄԳՏՍՄ սերվիս» ՓԲԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 24.03.2016թ-ի թիվ 5012041 ակտը (այսուհետ նաև Ակտ): Ընկերության գանգատը վերաբերվում է Ակտի 23-րդ կետով՝ եկամտային հարկի գծով, լրացուցիչ վճարման առաջադրված պարտավորությանը, ընդհանուր գումարով 15.935.616 դրամ:

Նշվեց նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունում փաստաթղթեր են ստացվել «ՄԳՏՍՄ սերվիս» ՓԲԸ-ի վերաբերյալ, որոնք անմիջականորեն առնչվում են Ակտի 23-րդ կետով արձանագրված խախտմանը:

Հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունում նյութեր են նախապատրաստվում, որոնք անմիջականորեն առնչվում են Ակտի 23-րդ կետով արձանագրված խախտմանը և անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, հետևապես ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «ՄԳՏՍՄ սերվիս» ՓԲԸ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝

«ՄԳՏՍՄ սերվիս» ՓԲԸ 18.05.2016թ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ